



Գրիգոր ԲԵՔՄԵՉՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավական գիտությունների թեկնածու

Անի ՄՈՒԹԱՖՅԱՆ

Արդարադատության ակադեմիայի դասախոս, Դատական դեպարտամենտի Իրավական ակտերի մշակման ու փորձաքննության վարչության իրավական ակտերի մշակման և փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ

ԻՐԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԲՈՂԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԸ՝ ՈՐՊԵՄ ՇԻՆԾՈՒ ԳՈՐԾԱՐՔԻ ՏԵՄԱԿ

Քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածով, որպես շինծու գործարքի տեսակ, ուղղակիորեն սահմանված չէ իրական կողմի քողարկման նպատակով կնքված գործարքը, սակայն մնան գործարքը շինծու գործարք որակելու հնարավորությունն ամրագրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, ըստ էության, արձանագրելով, որ շինծու կարող է լինել նաև այն գործարքը, որն իրականում կնքվել է ոչ այն ստորագրած անձանց միջև¹: Մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «(...) Երկկողմ գործարքը կնքողներից միայն մեկ կողմի մոտ խաթարված կամքի առկայության դեպքում, չի կարող այդ գործարքը գնահատվել շինծու, քանի որ մնան փաստերի առկայությունը հնարավոր հիմք է տալիս հանգելու հետևության, որ հարցը վերաբերում է խաթարությամբ կնքված գործարքին (վիճահարույց գործարք), որի համար օրենսդիրը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313-րդ հոդված) սահմանել է անվավեր ճանաչելու այլ հիմքեր և դրանից բխող հետևանքներ»²: Հարկ է նաև նշել, որ ՌԴ գերագույն դատարանի պլենումի կողմից ևս որպես շինծու գործարք դիտարկվել է նաև այն գործարքը, որը կնքվել է՝ այլ սուբյեկտային կազմով գործարքը քողարկելու նպատակով: Ընդ որում՝ ՌԴ գերագույն դատարանի պլենումի կողմից ևս

սահմանվել է. «Շինծու լինելու կապակցությամբ անվավեր կարող է ճանաչվել միայն այն գործարքը, որն ուղղված է այլ իրավական հետևանքներ առաջացնելուն և քողարկում է գործարքի բոլոր մասնակիցների այլ կամքը: Միայն մեկ մասնակցի մտադրությունը՝ կնքելու շինծու գործարք, տվյալ նորմի կիրառման համար բավարար չէ»³:

Վերոգրյալից հետևում է, որ այլ սուբյեկտային կազմով գործարքը շինծու գործարք որակելու համար շինծու գործարք կնքելու կամքը պետք է առկա լինի գործարքի բոլոր մասնակիցների մոտ, հակառակ դեպքում գործարքը չի կարող դիտարկվել շինծու⁴: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ կողմին քողարկելու նպատակը հետապնդել են միայն գործարքի մի կողմում հանդես եկող մասնակիցները, սպա շինծու գործարքի առկայության մասին չի կարելի խոսել:

Մեր կարծիքով, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՌԴ գերագույն դատարանի պլենումի մնան մոտեցման հիմքում գուցե ընկած է այն տրամաբանությունը, որ նախ միայն մեկ կողմի մոտ գործարքի իրական կողմին քողարկելու նպատակի առկայությունն ապացուցելն ավելի դժվար է, քան երբ մնան նպատակ են հետապնդում գործարքի երկու կողմերը: Այնուհետև՝ եթե գործարքի կողմերից մեկը գործել է բարեխղճորեն, և միայն մյուս կողմն է

ՆՈՅՆԱԲԵՐ - ՂԵԿՏԵՆԱԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ՂԱՏԱԿԱԼ
Իշխանություն



իրական կողմին քողարկելու նպատակ հետապնդել, անվավերության հետևանքների կիրառումը կարող է հանգեցնել նշված բարեխիղճ կողմի իրավունքների և օրինական շահերի խախտման: Մասնավորապես՝ եթե քողարկված գործարքը ևս անվավեր լինի (հիմնականում այդպես էլ լինում է, քանի որ իրական կողմը գործարք կնքելու իրավունք, որպես կանոն, չի ունենում, ինչն էլ իրական կողմին քողարկելու պատճառ է հանդիսանում, օրինակ՝ օտարերկրացի լինելու հետևանքով հողի նկատմամբ սեփականության իրավունք չի ունենում), ապա այն կհանգեցնի երկկողմանի ռեստիտուցիայի, այսինքն՝ բարեխիղճ կողմը ստիպված պետք է լինի վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը կամ հատուցել դրա արժեքը, ինչը կարող է տվյալ պահին վերջինիս համար անհնարին լինել կամ պարզապես հանգեցնել վնասների: Բացի այդ, եթե քողարկված կողմը լինի պարտապանը, ապա վերջինիս գործարքի կողմ դիտարկելը պետք է իրականացվի պարտատիրոջ համաձայնությամբ, քանի որ պարտատիրոջ համար էական նշանակություն ունի, թե ով է իր հանդեպ պարտավորությունը կատարողը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մաս):

Միաժամանակ նշենք, որ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ իրական կողմի քողարկման նպատակով կնքված շինծու գործարքի վերաբերյալ ՀՀ վճարել դատարանի վերոգրյալ դիրքորոշումը բավականին հաճախ չի պահպանվում: Երբեմն իրական կողմի քողարկման նպատակով շինծու գործարք են որակվում այն գործարքները, որոնցում իրական կողմին քողարկելու կամքն առկա է միայն գործարքի մեկ կողմում հանդես եկող մասնակիցների մոտ: Նշված երևույթի պատճառը թերևս այն է, որ մնան գործարքների դեմ պայքարի օրենսդրական այլ կառուցակարգ, քան շինծու գործարքն է, սահմանված չէ: Երբեմն շինծու գործարքի

ինստիտուտը կիրառվում է կոմիսիայի, նվիրատվության հարաբերությունների նկատմամբ, իսկ երբեմն էլ վստահության հարաբերությունների նկատմամբ, որոնք տվյալ դեպքում քաղաքացիաիրավական պաշտպանությունից չեն օգտվում:

Օրինակ, դիմելով դատարան՝ հայցվոր Միքայել Մարգարյանը խնդրել է շինծու գործարք ճանաչել խաղողի այգու և ինքնական շինությունների վերաբերյալ առուվաճառքի պայմանագիրը գնորդ Վարդուհի Մարգարյանի (Միքայել Մարգարյանի դուստրն է - *նշումը մերն է*) մատվ և նշված գործարքի նկատմամբ կիրառել անվավեր գործարքին վերաբերող կանոնները, այն է՝ նշված գործարքով որպես գնորդ ճանաչել իրեն՝ Միքայել Մարգարյանին, առուվաճառքի պայմանագիրը համարել կնքված գնորդ Միքայել Մարգարյանի և Արայիկ Հովհաննիսյանի միջև: Դատարանը հանգել է հետևության, որ վաճառող Արայիկ Հովհաննիսյանի և գնորդ Վարդուհի Մարգարյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով գնորդ է հանդիսացել հայցվոր Միքայել Մարգարյանը, քանի որ վերջինս է վարել բանակցությունները, նա է վճարել գույքի համար պայմանավորված գինը, սակայն գույքը գրանցվել է Վարդուհի Մարգարյանի անվամբ, այսինքն՝ նշված պայմանագրով քողարկվել է Միքայել Մարգարյանի՝ իրական գնորդ հանդիսանալու հանգամանքը⁵:

Դատական ակտի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կնքված առուվաճառքի պայմանագիրը դատարանի կողմից դիտարկվել է որպես իրական կողմի քողարկման նպատակով կնքված պայմանագիր, մինչդեռ դատարանը չի բացահայտել ո՛չ կողմին քողարկելու նպատակը, ո՛չ կողմին քողարկելու գնորդի և վաճառողի դիտավորության առկայությունը⁶: Ավելին, վաճառողն ինքն է նշել, որ տեղյակ չէ, թե ով է գնորդը: Մեր կարծիքով, մնան փաստական հանգամանքների առկայության պայմաններում գործարքը չպետք է որակվեր որպես



շինձու գործարք:

Երբեմն դատարանների կողմից գործարքի իրական կողմի քողարկման նպատակով կնքված շինձու գործարք են որակվում այնպիսի գործարքներ, որոնց վերաբերյալ քննվող գործերով ոչ միայն չի բացահայտվում վաճառողի մտադրությունը՝ քողարկելու գործարքի կողմին՝ իրական գնորդին, այլև գործի հանգամանքների համադրությունը վկայում է իրական գնորդի և պայմանագրում որպես գնորդ նշված անձի միջև այլ հարաբերությունների առկայության մասին: Օրինակ, հայցվոր Հերոս Դիլանջյանը, դիմելով դատարան, խնդրել է մի շարք անշարժ գույքերի առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առաջին (շինձու) գործարքի անվավերության հետևանքներ, այն է՝ այդ գործարքների հիման վրա Վարուջան Քոլյունջյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումները ճանաչել անվավեր, իսկ այդ գործարքներով որպես գնորդ և այդ գույքերի նկատմամբ սեփականատեր ճանաչել իրեն՝ Հերոս Դիլանջյանին՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ Ավստրալիայի քաղաքացի և իր մտերիմ ընկեր հանգուցյալ Վարուջան Քոլյունջյանին հանձնարարել է իր կողմից տրամադրված գումարներով իր համար ձեռք բերել անշարժ գույքեր՝ հետագայում դրանք իր անունով վերաձևակերպելու պայմանով: Գործի քննությամբ հետազոտված ապացույցների արդյունքում դատարանը եզրահանգել է, որ թեև ձեռք բերված անշարժ գույքերի պայմանագրերը կնքվել, և դրանց նկատմամբ սեփականության իրավունքները գրանցվել են Վարուջան Քոլյունջյանի անվամբ, սակայն գործի քննությամբ ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների հանրագումարի պարագայում ապացուցվում է, որ անշարժ գույքերը ձեռք են բերվել Հերոս Դիլանջյանի համար, նրա դրամական միջոցներով և նրա հետ համաձայնություններ ձեռք բերելուց հետո միայն⁷:

Կարծում ենք, որ բերված օրինակում ոչ թե պետք է կիրառվելին շինձու գործարքի անվավերության հետևանքներ, այլ բավարար գրավոր ապացույցներ ներկայացնելու դեպքում կարող էր հաստատվել Հերոս Դիլանջյանի և Վարուջան Քոլյունջյանի միջև կոմիսիայի հարաբերությունների առկայության փաստը, իսկ նշված փաստը չհաստատվելիս այդ հարաբերությունները պետք է դիտարկվելին որպես վստահության վրա հիմնված հարաբերություններ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նախ նշենք, որ անհրաժեշտ է շինձու գործարքը հստակ տարբերակել հարակից ինստիտուտներից՝ նկատի ունենալով, որ գործարքը շինձու որակելու համար անհրաժեշտ է ապացուցել նման գործարք կնքելու երկու կողմերի կամքը: Եթե չի ապացուցվում շինձու գործարքով գործարքի իրական կողմին քողարկելու երկու կողմերի մտադրությունը և նման գործարքի դիմելու միջոցով որոշակի առավելություններ ստանալու, օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ շրջանցելու նպատակի առկայությունը⁸, ապա տվյալ գործարքը չի կարող դիտարկվել շինձու գործարք, և չեն կարող կիրառվել շինձու գործարքի անվավերության հետևանքները:

Միաժամանակ գտնում ենք, որ եթե գործարքը ստորագրվել է ոչ իրական գնորդի կողմից, սակայն չի հետապնդել նպատակ՝ ստանալու օրենսդրությունը հակասող որոշակի առավելություններ, շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ, ապա երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը նման գործարքով չեն կարող խախտվել, մինչդեռ կարող է ծագել գործարքի իրական կողմի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարց: Կարծում ենք, որ գործարքի իրական կողմը կարող է օգտվել իրավական պաշտպանության այլ եղանակներից: Օրինակ՝ եթե գործարքի իրական կողմի հանձնարարությամբ գործարք



քի կողմը ձեռք է բերել որոշակի գույք և իր անունից կնքել պայմանագիր, սպա բավարար գրավոր ապացույցների առկայության պայմաններում կարելի է հաստատել նշված երկու անձանց միջև կոմիսիայի հարաբերությունների առկայության փաստը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 791-րդ հոդված): Եթե նշված անձանց միջև հարաբերությունները չեն ստացել որևէ իրավական ձևակերպում, սպա դրանք պետք է դիտարկվեն որպես վստահության վրա հիմնված հարաբերություններ, որոնք տվյալ դեպքում քաղաքացիաիրավական պաշտպանությունից չեն օգտվում: Նման գործարքի հետևանքով տուժած անձը կարող է իր իրավունքների պաշտպանությունն իրականացնել քրեաիրավական միջոցներով, եթե առկա լինի խարդախության հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդված):

Այլ է հարցը, երբ առանց գործարքի մյուս կողմի իմացության գործարքի իրական կողմը քողարկվում է՝ հակաիրավական բնույթի առավելություններ ստանալու, օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ շրջանցելու նպատակով: Այսինքն՝ նման դեպքում կանգնում ենք փակուղու առաջ, քանի որ բախվում ենք այնպիսի գործարքի հետ, որում կողմը քողարկվում է հակաիրավական նպատակով, սակայն որը, ըստ գործող իրավակարգավորման, շինժու գործարք չի դիտարկվում, իսկ նման գործարքի դեմ պայքարի այլ օրենսդրական կառուցակարգ առկա չէ: Օրինակ՝ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի նկատմամբ կնոջ համատեղ սեփականության իրավունքի ծագումը շրջանցելու նպատակով՝ ամուսինը գույքի առուվաճառքի պայմանագրով որպես գնորդ նշում է մորը: Բանն այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հակաիրավական նպատակով կնքված գործարքի անվավերությունն ախտաբանված չէ: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքով սահմանված է իրավակարգի հիմունքներին կամ բա-

րոյականությանը հակասող նպատակով կնքված գործարքի անվավերությունը: Նշված գործարքի անվավերության համար բավարար է միայն մեկ կողմի դիտավորությունը⁹:

Նշվածից բացի՝ կարծում ենք, որ բեն նման գործարքներով կարող են խախտվել երրորդ անձանց, պետության և համայնքների իրավունքներն ու օրինական շահերը, սակայն նման գործարքների անվավերությունը կարող է հանգեցնել նաև գործարքի մյուս կողմի իրավունքների խախտման, ինչը չի կարող թույլատրելի լինել, քանի որ այդ կողմը գործարքը կնքել է բարեխղճորեն՝ առանց մյուս կողմի հետապնդած նպատակի իմացության: Օրինակ՝ եթե պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի շրջանակներում բնակարանն իրականում ձեռք բերի այլ անձ, սակայն պայմանագիրը ստորագրվի պետական ծառայողի կողմից, որի մասին վաճառողը տեղյակ չլինի, սպա նման պայմանագրի անվավերության դեպքում վաճառողը պետք է արդեն իսկ շինարարության մեջ ներդրած գումարները վերադարձնի գնորդին, ինչը կարող է և անհնարին լինել:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ գործարքի մասնակից չհանդիսացող անձանց, պետության և համայնքների իրավունքներն ու օրինական շահերը կարող են խախտվել իրական կողմին քողարկելու նպատակով կնքված երկու տիպի գործարքով՝ **գործարք, որում իրական կողմին քողարկելու նպատակ հերապանդել են գործարքի երկու կողմերն էլ, և գործարք, որում իրական կողմին քողարկելու նպատակը հերապանդել է միայն գործարքի մի կողմը:** Ընդ որում, նշված երկու գործարքներով էլ իրական կողմին քողարկելը պետք է հետապնդի նպատակ՝ ստանալու որոշակի հակաիրավական բնույթի առավելություններ, շրջանցելու որոշակի օրենսդրական արգելքներ կամ սահմանափակումներ: Միաժամանակ հարկ է նկատել, որ ներ-

ՆՈՅՆԱԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



կայումս **եթե առաջին գործարքի դեպքում երրորդ անձը կարող է շինծու գործարքի անվավերության հեղինակների կիրառման պահանջ ներկայացնել, ապա երկրորդ գործարքի դեպքում նման հնարավորություն չէ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի և չէ վճարել դատարանի նախադեպային որոշման ուժով առկա չէ:**

Ուստի, գտնում ենք, որ եթե իրական կողմին բողոքելու նպատակով կնքվել է այնպիսի գործարք, որում նման նպատակ հետապնդել է միայն գործարքի մի կողմը, և այդ գործարքով խախտվել են երրորդ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ապա նշված սուբյեկտ-

ներին, համապատասխան օրենսդրական լրացումներ կատարելով, պետք է հնարավորություն ընձեռել վերականգնելու իրենց իրավունքները՝ շինծու գործարքի անվավերության հետևանքների կիրառման պահանջ ներկայացնելու իրավունք նախատեսելով: Մինչդեռ նշված դեպքում, մեր կարծիքով, գործարքի բարելավող կողմի համար ևս պետք է առկա լինի իրավունքի պաշտպանության հնարավորություն: Մասնավորապես՝ վերջինս պետք է հնարավորություն ունենա գործարքի մյուս կողմից պահանջելու անվավերության հետևանքների կիրառման արդյունքում պատճառված վնասի հատուցում:

- ¹ Տե՛ս թիվ 3-89(ՏԳ)- և թիվ 3-35(ՎԳ) քաղաքացիական գործերով չ՛չ վճարել դատարանի 2008թ. փետրվարի 1-ի որոշումները:
- ² Տե՛ս թիվ 3-793 (ՎԳ) քաղաքացիական գործով չ՛չ վճարել դատարանի 2007թ. մայիսի 18-ի որոշումը:
- ³ Տե՛ս Постановление Пленума Верховного Суда РФ от 23.06.2015 N 25 «О применении судами некоторых положений раздела I части первой Гражданского кодекса Российской Федерации», կետ 87:
- ⁴ Որպես օրինակ, տե՛ս թիվ ԵԶԳ/0738/02/08 քաղաքացիական գործով չ՛չ վճարել դատարանի 2009 թ. հուլիսի 24-ի որոշումը, թիվ ԵՄԳ/2425/02/16 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Մալաթիա-Մեքսատիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թ. նոյեմբերի 30-ի վճիռը:
- ⁵ Տե՛ս թիվ ԱՐԳ-1/2281/02/16 քաղաքացիական գործով չ՛չ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թ. հոկտեմբերի 23-ի վճիռը, որը երրորդ անձ Արթուր Դալաչյանի կողմից բողոքարկվել է չ՛չ վերաքննիչ քաղաքացիական դատարան, և չ՛չ վերաքննիչ քաղաքացիական դատարան-

- նի կողմից վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը մերժվել է:
- ⁶ Նույնանման դատական գործեր կարելի է կրկին մեջբերել: Օրինակ, տե՛ս թիվ ԵԿԳ/5144/02/15 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2016թ. մայիսի 30-ի վճիռը:
- ⁷ Տե՛ս թիվ ԵԿԳ/1737/02/12 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. հուլիսի 30-ի վճիռը:
- ⁸ Տե՛ս Մուրաֆյան Ա. «Նպատակի» իրավական նշանակությունը շինծու գործարքում»//Չ՛չ դատախազության «Օրինակալություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի 95-րդ համար, 2016 թ., էջեր 46-52:
- ⁹ Տե՛ս Постановление Пленума Верховного Суда РФ от 23.06.2015 N 25 «О применении судами некоторых положений раздела I части первой Гражданского кодекса Российской Федерации», կետ 85:

RESUME - РЕЗЮМЕ

AS A SHAM TRANSACTION THE TRANSACTION CONCLUDED IN ORDER TO CONCEAL THE REAL PARTY

GRIGOR BEKMEZYAN

Candidate of Law, Associate Professor at the Chair of Civil Law at YSU Faculty of Law

ANI MUTAFYAN

Lecturer at Justice Academy, Chief Specialist of Legal Acts Development and Expertise Division, Department of Legal Acts Development and Expertise of Judicial Department

The authors studying as a sham transaction the transaction concluded in order to conceal the real party concluded that the rights and legal interests of the persons not being party of transaction can be broken by two types of transactions concluded in order to conceal the real party: a transaction in which both parties aimed to conceal the real party and a transaction in which only one party aimed to conceal the real party. As a result the authors suggested by making appropriate legislative amendments to state as a type of sham transaction also the transaction in which only one party aimed to conceal the real party and by which the rights and legal interests of third parties are broken. At the same time the authors suggested to grant a right to bona fide party of the transaction to demand compensation for damage caused as a result of application of legal consequences of invalidity.

Keywords: sham transaction, real party of transaction, damage, to conceal real party of transaction, adjacent institute.

ЗАКЛЮЧЕННАЯ С ЦЕЛЬЮ ПРИКРЫТИЯ РЕАЛЬНОЙ СТОРОНЫ СДЕЛКА КАК ВИД ПРИТВОРНОЙ СДЕЛКИ

ГРИГОР БЕКМЕЗЯН

Кандидат юридических наук, доцент кафедры гражданского права юридического факультета ЕГУ

АНИ МУТАФЯН

Лектор Академии правосудия, главный специалист отдела разработки и экспертизы юридических актов Управления разработки и экспертизы юридических актов Судебного департамента

В статье изучается сделка, заключенная с целью прикрытия реальной стороны, как вид притворной сделки. В результате проведенного исследования авторы сделали вывод о том, что права и законные интересы лиц, не являющихся участниками сделки, могут быть нарушены двумя типами сделок, заключенных с целью прикрытия реальной стороны сделки: сделки, в которой обе стороны преследуют цель прикрыть реальную сторону сделки, и сделки, в которой только одна сторона преследует цель прикрыть реальную сторону сделки. Авторы предложили внести в законодательство дополнения, что позволит рассматривать сделку, в которой только одна сторона преследует цель прикрыть реальную сторону сделки, если в этой сделке нарушены права и законные интересы третьих лиц, как вид притворной сделки. В то же время авторы предложили предоставить право добросовестной стороне сделки требовать компенсацию за причиненный вред от другой стороны сделки.

Ключевые слова: притворная сделка, реальная сторона сделки, причиненный вред, прикрывать реальную сторону сделки, смежный институт.

Բանալի բաներ - շինժու գործարք, գործարքի իրական կողմ, անարձանված վնաս, քողարկել գործարքի իրական կողմին, հարակից ինստիտուտ:

УДБԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018 11 - 12 (233-234)

ԴԱՏԱԿԱՆ
ԻՆՖՈՐՄԱՑԻՅԱ